ԿՈՄՍ ԼԵԻ ՏՈԼՍՏՈՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

(«Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը» հայերէն թարգ. դրքոյկի առիթով)։

ՅՈՎՀ. ՍԱՂԱԹԵԼԵԱՆՑԻ

Կոմս Լև Տոլստոյի վերջին ժամանակներում գրած վիպական գրուածներում գեղարուեստական տարրը երկրորդական տեղ է բռնում, ծառայելով նորա բարոյագիտական տենդենցիաներին. մի հանգամանք, որը անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ, նորա այդ տեսակի աշխատութիւնները քննական հայեացքով անցնելիս, որովհետև այդ հանգամանքը, բացի իւր սեպհական ուղղակի առաջնակարգ դերից, անխուսափելի կերպով ազդում է և ստեղծագործութեան լատկութեան վերայ։ Երբ վէպը չեղուում է իւր իսկական դերից—արտաբերել իրական սովորական կեանքը տիպական երևոյթներով, գեղարուեստականը դուրս է գալիս արդէն իւր բնական օրէնքներից, և նորա առաջին լատկութիւնը, այսինքն լինել միայն արտայայտութիւն իրական կեանքի, վերջինիս թէ բարձր և թէ ստոր տարրերի,—հեղինակը ղոհելով ուրիշ նպատակի, փորձանքի է ենթարկում և իւր տաղանդը, որովհետև երբ նա, փոխանակ հետևելու իրականութեանը և բնութեանը, ուզում է վերջիններս ծառայեցնել իւր նպատակներին, նա արդէն վտանգի է ենթարկուում դուրս գալ ճշմարտութեան սահմաններից։ Հասկանալի է որ այդ ուղղութեան վէպում դուրս բերած անձնաւորութիւնների վերայ չը պիտի նայել իբրև տիպերի, այլ իբր միջոց, հեղինակին տոգորող գաղափարի արտայայտութեան և նորա փիլիսոփայական սիստեմը պաշտպանելու և կեանք մտցնելու։ Այսպիսի դէպքում գեղարուեստականի կոչումը լինում է այն, որ ստեղծելիք անձնաւորութիւնները համաձայն լինեն բնական և հոգեբանական օրէնքներին։ Այս կողմից կոմս Լև Տոլստոյի գեղարուեստական տաղանդը այն աստիճան զօրեղ է, որ ամենայաջող կերպով է կատարում իւր երկրորդական դերը։

Կոմս Տոլստոյը իւր վէպերում չի դուրս գալիս և ոսվորական տեն-դենցիալով, իբրև պաշտպան հասարակական այս կամ այն հոսանքի, իբրև մարտնչող՝ իրական չարերի սահմանում. և, ինչպէս ասացինք, նպատակ չունի անխտիր նկարագրել իրականութիւնը. նա աշխատում է որոշ փի-լիսոփայական հայեացքների տարածման համար, ձգտում է նոր յարաբե-րութիւն ստեղծելու դէպի կեանքը։ Այդ հանգամանքը կազմում է նորա աշխատութիւնների կենտրոնական տարրը, և վերջինս է որոշում այն մեծ տպաւորութիւնը, որ անում են այդ աշխատութիւնները ընթերցողների վերայ։ Հետևաբար այդ աշխատութիւնների արժէքը և գնահատութիւնը կախւած է նրանց միջում արծարծւող վարդապետութեան արժանաւորու-թիւններից, թէ որ ատոմանի նա կրթիչ, բարոյականացնող և միեւնոյն ժամանակ նեցուկ է յառաջադիմութեան։ Կոմս Լև Տոլստոյի թէօրիան կեանքի կամ որ աւելի լաւ է ասել, թէօրիաները, որոնք, ի դէպս է նկատել, մէկը միւսի յետևից ծագելով՝ հակասում են միմեանց, առաջին անգամից աչքի են ընկնում նորանով, որ դոքա ինքնուրոյն չեն. բայց միեւնոյն ժամանակ դրանց, այդ թէօրիաները, չի կարելի վերաբերել ոչ մէկին մինչև այժմ եղածներից այն ձևով, ինչպէս նրանց առաջարկում է կոմս Տոլստոյը։ Նա վերցնում է այս կամ այն վարդապետութեան միայն մի կողմը և ըստ երևոյթին չնչին փոփոխութիւն անելով նորա մէջ, առա-ջարկում է իբրև անպայման սիստեմ։

Միւս կողմից, պէտք է ասած ամենանշանաւոր կողմից, որ աչքի են ընկնում նորա թէօրիաները, դա այն է, որ նոքա հիմնովին յեղաշրջում են նպատակը իրանց աղբիւրի—այն վարդապետութիւնների, որոնցից վերցւած են և որոնց ըստ երևոյթին ջերմեռանդ պաշտպանն է կոմս Տոլստոյը։ Վերջին հանգամանքը աչքի առաջ ունենալով, պէտք է ասել, որ այդ վարդապետութիւնները աւելի վտանգաւոր կոմենտատոր քան կոմս Տոլ-ստոյը երբէք չեն ունեցած։ Իբրև հետևող ներկայանալով քրիստոնէական վարդապետութեան, նա վերցնում է վերջինիցս այս կամ այն պրինցիպը և փոխում է նրան այնպէս, որ նա կորցնում է իւր սկզբնական նպատակը և մարգարէի ձևով սկսում է քարոզել այդ դաղափարը։ Վերոլիշեալ վար-դապետութեան սիստեմից նա վերցնում է գլխաւորապէս այն սկզբունքը, որը ասում է «բարի արէք ձեր ատելիներին», և փոխում է այդ ուրիշ ֆորմուլայի, որը ըստ երևոյթին նման է առաջինին—«տար չարիքը, կամ մի հակառակիր չարիքին (терпи зло, не противься злу), բայց իսկապէս կազմում է միայն մի կողմը և այդ մի կողմը նա բարոյականութեան միայնակ նպատակ է դարձնում, որի հետևանքը երևակայել կա-րելի է այսպէս՝ մի կողմից չար հակման ենթակայ մարդիկ չարիք են գործում, իսկ միւս կողմից բարոյական մարդիկ գործունեայ չարիքի դէմ միայն այն են անում, որ համբերութեամբ տանում են այդ չարիքը։ Մինչդեռ Քրիստոսը՝ մերժելով չարիքին չարիքով պատասխանել,

պահանջում է բարիք անել չարիք անողին և միևնոյն ժամանակ կուել չարիքի հետ, աշխատելով նորա գոյութեան դէմ, բայց այնպիսի միջոցներով, որոնք ոչ ոքի չարիք չեն հասցնում. իսկ չարիքը ինքն ըստ ինքեան օգտաւէտ չը լինելով, ոչնչանալով, չի կարող մէկին վնաս բերել։ Մինչդեռ Քրիստոսը ուրիշ դէպքերում աւելի որոշ և անձամբ օրինակ տալով, պահանջում է բողոքել չարիքի դէմ, մերկացնել նորա կատարողներին, պատառելով խաբեբայական քօղը նրանց երեսից,—պախարակել նրանց բոլորի առաջ,—աշխատել, համոզելով, բերել դէպի ուղիղ ճանապարհ, կոմս Տոլստոյի ստեղծած բարոյականութեան օրինակելի անձնաւորութիւնները իրանց կեանքում միայն այն են անում, որ լուռ լինելով դէպի մարդկային հասարակութիւնը ճնշող չարիքը, չը դուրս գալով իբրև բողոքողներ և մաքառողներ այդ չարիքը հասցնողների դէմ, լռութեամբ և համբերութեամբ տանում են իրանց անձին հասցրած չարիքը։

Իսկ քրիստոնէական վարդապետութեան ամենագլխաւոր հիմքը—«դնել անձը և ստացուածքը ուրիշների համար» կոմս Տոլստոյի աշխատութիւնների մէջ շատ քիչ է արծարծւում և կրկին այն ձևով է խոսաւանում այդ սկզբունքը, որ վերջինս նոյնպէս դատապարտում է անպտուղ մնալու։ Չը պնդելով այս ամենանշանաւոր պատգամի մարդկանց համար պարտաւորեցուցիչ լինելու վերաբերեալ, նա զբաղւում է միայն այն հարցով—թէ այդ տեսակ ցանկութիւն ունեցողը ինչ ձևով պիտի օգնի իւր մերձաւորին և այդ վճռում է այն ձևով, որ այդ սկզբունքը կարող է իրագործելի լինել միայն իբրև բացառութիւն։ Նա վճռում է, որ մէկը իրաւունք ունի օգնել միւսին միայն իւր աշխատանքով. դրամով չի կարելի օգնել, որովհետև դրամ տալ մէկին, կը նշանակէ պարտաւորացնել միւսներին կատարելու այդ մարդու պահանջները. նա համեմատում է դրամը մուրհակի հետ (Что же намъ дѣлать?)։

Կոմս Տոլստոյի վերջին պրինցիպը սերտ կապւած է նորա այն թէորիայի հետ, որը վերաբերում է հասարակութեան տնտեսական կազմակերպութեանը, որ նոյնպէս ըստ երևոյթին նման է մի տիրապետող թէորիայի, բայց իսկապէս այլ նպատակ և այլ հետևանք ունի։ Նորա տնտեսական կազմակերպութեան իդէալը կազմում է մի այնպիսի դրութիւն, երբ իւրաքանչիւր մարդ իւր ա ն մ ի ջ ա կ ա ն աշխատանքով բաւարարութիւն է տալիս իւր բ ո լ ո ր պահանջներին—մի դրութիւն, որը կարող է հնարաւոր լինել միայն այն ժամանակ, երբ քաղաքակրթութիւնը ոչ թէ միայն կանգ կ'առնի, այլ մարդիկ կը լետադիմեն մինչ նախնական կիսավայրենի դրութիւնը։ Եթէ ուշադրութեամբ նայենք, կը տեսնենք որ այս պրինցիպը աղաւաղումն է այն քաղաքատնտեսական թէորիայի, որը առարկայի արժեցողութիւնը չափելով միայն նորա՝ վերայ գործ դրած աշխատանքի չափով, պահանջում է այն տեսակ տնտեսական կազմակերպութիւն, երբ իւրաքանչիւր մարդու երկամուտի աղբիւրը կը կազմէ միայն նորա աշխա-

սանքը։ Ընդունելով այս թէօրիան, կոմս Տոլստոյը աւելացնում է նրան և մի պահանջ—որ մարդ, ապրելով իւր աշխատանքով, իւր կարիքներին անհրաժեշտ բոլոր նիւթերը անմիջապէս սեփական ձեռքով պատրաստէ—մի պահանջ, որ անհնարին է դարձնում բոլորովին մի որ և իցէ կազմակերպութիւն քաղաքակիրթ հասարակութեան այդ թէօրիայի հիման վերայ, ուրեմն անիրագործելի է դարձնում նոյն թէօրիայի նպատակը (տես նոյն Что же намъ дѣлать?)։

Այս տարօրինակ ինքնուրոյնութիւնը շարունակւում է կոմս Տոլստոյի վարդապետութեան միւս սկզբունքներում, որոնց պակը այդ կողմից կազմում է նորա ամենավերջին թէօրիան ամուսնութեան վերաբերմամբ, որը բոլորովին հակասում է նորա նախկին հայացքին նոյն առարկայի մասին։ Սկսելով նրանից, որ նա կնոջ միայնակ կոչումը դնում էր մարդկային ցեղի աճեցողութեան մէջ, զրկելով մարդկութեան ամբողջ կէսը զարգացման, լուսաւորելու և քաղաքացիական իրաւունքներից, նա, վերջ ի վերջոյ, ոչ թէ աճեցողութիւնը, այլ նոյն իսկ ամուսնութիւնը մեղք է համարում բարոյականութեան դէմ (Крейцерова соната)։ Կոմս Տոլստոյի թէ առաջին և թէ վերջին հայեացքը կնոջ մասին զուտ ինքնուրոյն չեն, ինքնուրոյնութիւնը կայանում է յայտնի փոփոխութեան մէջ, որը յեղաշրջում է նրանց նպատակը։ Որ կնոջ առաջին կոչումն է մայր լինել, սերունդ տալ, ամենահին ճշմարտութիւն է, որ ընդունւում է ամենայն տեղ,—բայց ոչ միայնակ. կոմս Տոլստոյը դարձնում ի նորա միայնակ կոչումը (իւր առաջուայ հայացքում)։ Ամենաանպատեհին նորա վերջին հայացքն է կնոջ մասին, որի մէջ ըստ երևոյթին աւետարանի պատգամն է պաշտպանում—«եթէ մէկը չար աչքով նայի կնոջ վերայ, նա արդէն շնացաւ իւր սրտի մէջ». բայց այդ պատգամը նա այնպէս է ուղղում, որ ոչնչանում է ոչ թէ միայն նորա նպատակը, այլ ամբողջ այն վարդապետութիւնը, որի մի մասն է կազմում նա։ Այդ տեսակ հայեացք կնոջ և տղամարդու մասին նա տարածում է և երկու ամուսինների վերաբերմամբ. ուրիշ խօսքերով՝ նա պահանջում է մարդկային ցեղի դադարումը։ Դորանից լեսոյ (մարդկային ցեղի վերջանալուց յետոյ) էլ ինչպէս կարող է գոյութիւն ունենալ բարոյականութիւնը և Աստծոյ գաղափարը, յանուն որոնց խօսում է կոմս Տոլստոյը (Исповѣдь)։

Պարադոկսներով կոմս Տոլստոյը կարողացաւ երբեմն երբեմն զբաղեցնել այդ ուս հասարակութիւնը, բայց վտանգաւոր ճանապարհը անել փորձանքի մէջ ձգեց նորան։ Նորա վերջին թէօրիան նորա առանց էն էլ միմեանց հետ չը կապւող պրինցիպները ոչնչացրեց իսպառ, և նա մնաց մի դրութեան մէջ, որը խիստ ցաւալի պիտի համարել իւրաքանչիւր տաղանդաւոր և մտածող մարդու համար։ Մի կողմից կոմս Տոլստոյը ընդունում է նախախնամութեան գաղափարը և առաքինութեան լաթանակը, միւս կողմից առաջարկում է դադարեցնել մարդկային ցեղի գոյութիւնը։

Մենք աշխատեցինք որքան կարելի է կարճ կերպով պարզել կոմս

Տոլստոյի վարդապետութեան տարրերը, նորա աշխատութիւնների նպատակը և միտքը հասկանալու համար։ Իսկ թէ ինչ պատճառներից և ինչպէս մի տաղանդաւոր և մտածող մարդու մէջ գոյացել են այդպիսի պարադոքսներ, դա ուրիշ հարց է, որին կարելի է պատասխանել, այդ հեղինակի անձնաւորութիւնը և բոլոր աշխատութիւնները ուսումնասիրելով։ Պէտք է աւելացնել որ կոմս Տոլստոյը իւր բոլոր պրինցիպներին տալիս է թէօլոգիական կերպարանք, իսկ սաեղծագործութեանը միստիկական ուղղութիւն։

Այդ տեսակի աշխատութիւններից մէկն է և վերև փշուածը։ Այդտեղ պատմւում է հետևեալը։

Մի վրագիմիրցի ջահիլ վաճառական Աքսենով ազդանունով ճանապարհ է ընկնում դէպի Նիժնի-Նովգորոդի տօնավաճառը։ Ճանապարհին մի կայարանում նա դիշերում է մի ուրիշ վաճառականի հետ, որին այդ ժամանակամիջոցում մի աւազակ ծածուկ սպանում է և իւր արիւնոտ դանակը դնում է Աքսենովի պայուսակը։ Վերջինիս խուզարկում են և, չը նայելով նորա հերքման, արիւնոտ դանակի հիման վերայ ծեծի են ենթարկում և ուղարկում տաժանակիր աշխատանքի Սիբիր։ Քսան ու վեց տարուց յետոյ նոյն բանտը բերում են նոր բանտարկեալներին, որոնց մէջ գտնւում է վերոյիշեալ վաճառականի իսկական սպանողը։ Մի օր Աքսենովը տեսնում է, որ այդ մարդասպանը—Մակարը—բանտի պատը փորում է փախչելու նպատակով։ Աքսենովից ոճրագործը պահանջում է լռել տեսածի մասին, խոստանալով նրան ես ազատութիւն, հակառակ դէպքում սպառնում է սպանել նորան։ Աքսենովը պատասխանում է, որ նա արդէն սպանել է իրան այստեղը հասցնելով և սկսում է զսպել իւր հոգու վիշտը ու բարկութիւնը աղօթքով։ Առհասարակ նա զբաղւած էր աւետարան կարդալով և եկեղեցում երգելով։ Երբ բանտի վարչութիւնը պատը փորելը նկատում է և այդ մասին հարց ու փորձ է անում բանտարկեալներին, վերջիններս բացասում են այդ իմանալը, որոնց թւում և Աքսենովը, որը պատասխանում է թէ Աստուծու հրամանով չի կարող պատ փորողին ցոյց տալ։ Մի դիշեր Աքսենովը տեսնում է թէ ինչպէս մարդասպան Մակարը եկել է իրան մօտեցել և նորա ոտների մօտ նստել։ Աքսենովի հարցրին թէ ինչ է ուզում, Մակարը պատասխանում է, թէ Աքսենովի վարմունքը նորա մէջ այնպիսի խղճի տանջանք առաջ բերեց, որ տաժանագրի ծեծը աւելի թեթև է նորա համար, քան թէ Աքսենովի երեսին նայելը։ Առաջարկում է յայտնել իրողութիւնը Աքսենովին ազատելու համար և, իրան չարագործ անւանելով, սկսում է ողբալ։ Աքսենովը պատասխանում է, որ իրան գնալու տեղ չը կայ, կինը ու որդիքը իրան մոռացել են, ինքը նոյնպէս սկսում է լալ և ասում է. «Թող Աստուած ինքը ների քեզ, կարելի է ես քեզնից հարիւր անգամ աւելի վատ եմ»։ Եւ նա այլ ևս տան կարօտը չէր քաշում, բանտից դուրս գալ չէր ուզում, այլ միայն իւր վերջին ժամի վերայ էր մտածում։

Մակարն Աքսենովին ականջ չը դրեց, լսեցնեց, որ հանցաւորը ինքն է եղել։ Երբ որ Աքսենովին չետ դառնալու հրամանը դուրս եկաւ,—նա արդէն մեռած էր։

Պէտք է աւելացնել, որ կոմս Տոլստոյ վէպը սկսում է միստիկական նախազգուշացումով, Աքսենովի կնոջ երազով, որի մէջ նա տեսնում է ինչպէս իւր մարդը սպիտակել էր և առաջարկում է վերջինիս չետաձգել իւր գնալու օրը, բայց Աքսենովը չի լսում կնոջը, հակառակ բացատրութիւն տալով նորա երազին։

Ընթերցողը կը հարցնի—ինչումն է կայանում այստեղ Աստուծոյ դատաստանը, որովհետև սովորական ձևով մտածողը մի դատաստան չի կարող նկատել այսպիսի դէպքում, երբ իսկապէս արդար մարդը մեռնում է բանտում հէնց այն ժամանակ, երբ նորա ազատութեան հրամանը դուրս է գալիս։ Բայց ուրիշ կերպ է լուսաբանւում դէպքը, երբ կոմս Տոլստոյի տեսակէտից նայենք նորա վերայ։ Այստեղ կատարւում է բարոյականութեան յաղթութիւն,—մեղաւորը զղջում է. ինչու. որովհետև միւսը համբերութեամբ տանում է իրան նրանից հասցրած չարիքը.—չետոյ չարիքից տանջւածը հաշտւում է իւր վիճակի հետ և չի ուզում դուրս գալ այդ տեսակ գրութիւնից։ Այստեղ մենք չենք կարող չը նկատել աւետարանական սկզբունքը—չը պատասխանել չարիքով չարիքին։ Իսկ միւս կէտը—հաշտւել չարիքի հետ և չը փնտռել ուրիշ կոչում իւր կեանքին, այն է դնել իւր անձը և ստացւածքը ուրիշների համար, ոչ ոք չի կարող կապել աւետարանի սկզբունքների հետ, որի իդէալն է ոչ թէ կենդանի թաղւել բանտի մէջ, այլ ընդհակառակը աշխատել դուրս գալ նրանից և գնալ կուռելու աշխարհը տանջող չարիքի դէմ։